ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/26

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Դերձակ» ՍՊԸ-ի 31.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Դերձակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դերձակ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 31.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Դերձակ» ՍՊԸ-ն ս.թ. հունիսի 13-ին մասնակցել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

17.07.2017թ. ժամը 23:05-ին էլեկտրոնային փոստի միջոցով ««Դերձակ» ՍՊԸ-ն ստացել է 14.07.2017թ. N2/1 արձանագրությունը, որով Ընկերությունը ճանաչվել է հաղթող՝ 1-ին, 6-րդ, 8-րդ, 10-րդ չափաբաժիններով: Արձանագրությանը կից գրությամբ նշվել էր, որ մինչև 20.07.2017թ. ժամը 18:00-ը անհրաժեշտ է ներկայացնել երկուական նմուշ այն չաձփաբաժիններով նախատեսված ապրանքների, որոնցով «Դերձակ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից:

Միաժամանակ, գրությամբ նշվել է, որ «Դերձակ» ՍՊԸ-ն հրավիրվում է 11-րդ չափաբաժնի համար առաջարկված գնային առաջարկների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակացությունների՝ 19.07.2017թ. ժամը 11:00-ին:

Նշված բանակցությունների արդյունքներով «Դերձակ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ճանաչվել է նվազագույնը:

«Դերձակ» ՍՊԸ-ն դիմել է N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հայտնելով, որ նախատեսված ժամկետում՝ մինչև 20.07.2017թ. ժամը 18:00-ը, անհնար է պատրաստել պահանջվող նմուշները, քանի որ միայն դրանք ասեղնագործելու համար անհրաժեշտ է առնվազն մեկից երկու օր, այն դեպքում, որ ասեղնագործելու ամենամեծ արտադրամասը ՀՀ-ում պատկանում է «Դերձակ» ՍՊԸ-ին:

«Դերձակ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ այն նմուշները, որոնք Ընկերությունը հասցրել է պատրաստել, մեկական օրինակից 20.07.2017թ. ներկայացվել են Ընկերության կողմից՝ առաջարկելով ներկայացնել նաև երկրորդ նմուշը, սակայն հանձնաժողովը հայտարարել է, որ մեկն էլ բավական է:

Ընկերությունը նշել է, որ 11-րդ չափաբաժնի տեխնիկական պայմանում առկա է եղել վրիպում, որը ընդունվել է հանձնոժողովի կողմից:

«Դերձակ» ՍՊԸ-ն հավելել է, որ, չնայած այն հանգամանքին, որ ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական պայմաններով սահմանված է, որ ապրանքների նմուշները պետք է ներկայացվեն մատակարարումից առաջ՝ 2 օրինակից, իսկ ապրանքների մատակարարումը կատարվում է պայմանագիր կնքելուց հետո, սակայն Ընկերության համար անհասկանալի պատճառներով դրանք պահանջվել են անմիջապես մրցույթից հետո և ոչ պատշաճ ժամկետներում:

Ընկերությունը նշել է նաև, որ 27.07.2017թ. ժամը 21:06-ին Ընկերությունը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է այն մասին, որ հանձնաժողովը ներկայացված որոշ ապրանքատեսակների նմուշները գնահատել է անբավարար, ինչը Ընկերության կողմից դիտարկվում է որպես հանձնաժողովի կողմից կամայականության դրսևորում, որի արդյունքում պետությանը հասցվել է 11 մլն դրամի վնաս:

Ընկերությունը ենթադրում է, որ Պատվիրատուի կողմից առկա է մրցակցային դաշտը ապօրինի «մաքրելու» միտում:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, և Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1.Դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Դերձակ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը:

2.Արգելել պայմանագիր կնքել այլ ընկերության հետ, մինչև Խորհրդի կողմից սույն բողոքի վերաբերյալ որոշման ընդունումը:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Դերձակ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Զոհրակ Սողոմոնյանը, Արմեն Նահապետյանը և Ալեքսանդր Հայրապետյանը:

2. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.08.2017թ. թիվ 7/01/1/8540-17 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար ‹‹Գնումների մասին›› ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կազմակերպվել է ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով համազգեստի ձեռքբերման ընթացակարգ և ընթացակարգի հրավերը ս/թ. հուլիսի 4-ին էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգով ուղարկվել է հնարավոր մասնակիցներին:

ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով, սահմանվել է դրույթ, համաձայն որի, առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի համապատասխանությունը ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին գնահատվելու է մասնակցի կողմից ներկայացված պատրաստի նմուշի հիման վրա: Մասնակիցները համապատասխան նմուշները պետք է ներկայացնեին գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելուց և համապատասխան արձանագրությունն ու ծանուցումն ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում: Մինչև հայտերի բացումը, ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով

ընթացակարգի հնարավոր որևէ մասնակցի, այդ թվում նաև ‹‹Դերձակ›› ՍՊԸ կողմից հրավերի վերոնշյալ դրույթը չի բողոքարկվել, պարզաբանումներ չեն պահանջվել:

ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել ս.թ. հուլիսի 13-ին: Հայտերի բացման նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով՝ համաձայն ‹‹Գնումների գործընթացի կազմակերպման մասին›› ՀՀ կառավարության 04.05.2017թ. №526-Ն որոշման №1 հավելվածի (այսուհետ՝ Որոշում) 41-րդ կետի, քանի որ գնահատող հանձնաժողովը որոշեց, որ հայտ ներկայացրած մասնակիցներից ‹‹ԱԲԻ›› ՍՊԸ-ի հայտով ներկայացված հայտարարությունները և գնային առաջարկը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու հանգամանքը լրացուցիչ մասնագիտական եզրակացության անհրաժեշտություն ունի և հանձնաժողովի քարտուղարը ‹‹ԱԲԻ›› ՍՊԸ-ի հայտով ներկայացված հայտարարությունները և գնային առաջարկը էլեկտրոնային եղանակով ուղարկել է «Էլեկտրոնա-յին կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ)՝ հայտի էլեկտրոնային ստորագրության առկայության և իսկության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

14.07.2017թ. ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերսկսման նիստով «Դերձակ» ՍՊԸ-ն 1-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այլ ոչ թե հաղթող կամ ընտրված մասնակից, իսկ 11-րդ չափաբաժնի մասով ‹‹Դերձակ›› ՍՊԸ-ն և ‹‹Գդակ›› ՍՊԸ-ն 19.07.2017թ. հրավիրվել են գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների, քանի որ առկա էր նվազագույն գների հավասարություն: Տվյալ արձանագրությունը և ծանուցումը մասնակիցներին ուղարկվել է նիստին հաջորդող աշխատանքային օրը՝ համաձայն Որոշման 43-րդ կետի, ինչպես նաև հրապարակվել է gnumner.am կայքում: Համաձայն արձանագրության և ծանուցման, առաջին տեղ զբաղեցնող մասնակիցները պետք է համապատասխան չափաբաժիններով իրենց կողմից առաջարկվող ապրանքատեսակների նմուշները ներկայացնեին գնահատող հանձնաժողովին մինչև 20.07.2017թ. ժամը 18:00-ն: Ինչ վերաբերում է մասնակցի բողոքում ծանուցումն ստանալու նշված ժամին, հայտնում եմ, որ հանձնաժողովի քարտուղարի կողմից ծանուցումներն ու արձանագրությունները, բացի Armeps համակարգով ուղարկվելուց, լրացուցիչ ուղարկվել են նաև մասնակիցների էլեկտրոնային փոստերին և մասնակցի նշված ժամը լրացուցիչ ծանուցմանն է:

19.07.2017թ. միաժամանակյա բանակցությունների էր ներկայացել հրավիրված մասնակիցներից միայն ‹‹Դերձակ›› ՍՊԸ-ն, նվազեցրել գնային առաջարկը և ճանաչվել է 11-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 20.07.2017թ. մասնակիցը ստացել է գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը և ծանուցվել է առ այն, որ 11-րդ չափաբաժնով իր կողմից առաջարկվող ապրանքի նմուշը անհրաժեշտ է ներկայացնել մինչև 25.07.2017թ. ժամը 18:00-ն, այլ ոչ թե 20.07.2017թ.: Որևէ մասնակցից գնահատման նպատակով 2 նմուշ չի պահանջվել՝ ոչ հրավերով, ոչ էլ գնահատող հանձնաժողովի արձանագրություններով կամ ծանուցումներով: Երկու նմուշի դրույթը ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի համաձայն վերաբերում է պայմանագիր կնքվելուց հետո մատակարարման փուլին և որևէ կապ չունի գնահատող հանձնաժողովի գործառույթների հետ: 11-րդ չափաբաժնի մասով «Դերձակ» ՍՊԸ-ի ներկայացված բողոքում տեխնիկական պայմանի վերաբերյալ վրիպակի առկայությունը անհասկանալի է, քանի որ ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում 11-րդ չափաբաժնի մասով հղում է արված՝ նկարի միայն կտորի գունավորումը ցույց տալու նպատակով: Հանձնաժողովի կողմից որևէ վրիպակ չի ընդունվել: Մինչև 20.07.2017թ. «Դերձակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են նմուշներ 1-ին, 6-րդ և 10-րդ չափաբաժիններով: Մինչև 20.07.2017թ., ինչպես նաև մինչև 25.07.2017թ. 11-րդ չափաբաժնով «Դերձակ» ՍՊԸ-ն նմուշ չի ներկայացրել: Գնահատող հանձնաժողովի 26.07.2017թ. 3-րդ նիստով «Դերձակ» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով մերժվել է՝ համաձայն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնի, իսկ 10-րդ չափաբաժնով ճանաչվել է ընտրված մասնակից: 6-րդ չափաբաժնով «Դերձակ» ՍՊԸ ներկայացված նմուշը ներկայացվել է փորձաքննության՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ ընթացակարգի գնահատման արդյունքում մերժվել են ոչ միայն «Դերձակ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված չափափաժիններ, այլև «Աբի» և «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ների հայտերով ներկայացված չափաբաժիններ:

Պատվիրատուի համար անընդունելի և անհասկանալի է նաև մասնակցի կողմից պետությանը 11 մլն ՀՀ դրամի չափով վնաս հասցնելու վերաբերյալ պնդումը և միտումնավոր դաշտ մաքրելու վերաբերյալ ենթադրությունը:

Նմուշը ներկայացնելու վերաբերյալ ֆիզիկապես անհնար լինելու մասնակցի պնդումը ևս անընդունելի է Պատվիրատուի համար: ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով

ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ընտրված մասնակիցը միայն 1-ին չափաբաժնի մասով մինչև ս/թ. սեպտեմբերի 30-ը պարտավոր էր մատակարարելու 1000 լրակազմ ամենօրյա համազգեստ»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչներ Վահագն Օհանյանը և Հրաչյա Գալստյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Դերձակ» ՍՊԸ -ի 31.07.2017թ. ներկայացրած բողոքը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.08.2017թ. թիվ 7/01/1/8540-17 գրությունը, «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 13.07.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2, 14.07.2017թ. ժամը 18:15-ին կայացած նիստի թիվ 2/1, 19.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2/2, և 26.07.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը համազգեստի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Դերձակ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի կողմից 14.07.2017թ. ժամը 18:15-ին կայացած նիստի թիվ 2/1 արձանագրության՝

- 10.1 կետով «Դերձակ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ ընթացակարգի 1-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով.
- 11-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով կասեցնել նիստը և «Դերձակ» ՍՊԸ-ին և «Գդակ» ՍՊԸ-ին 19.07.2017թ. ժամը 11:00-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, քանի որ տվյալ չափաբաժնով առկա է նվազագույն գների հավասարություն.

•13.3 կետով Հանձնաժողովը որոշել է ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին գնահատման նպատակով մինչև 20.07.2017թ. ժամը 18:00-ն ներառյալ Պատվիրատուին ներկայացնել պատրաստի ապրանքատեսակների նմուշները՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման և մասնագիտական խմբի եզրակացությունն ստանալու նպատակով:

Հանձնաժողովը 19.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2/2 արձանագրության 16-րդ կետով որոշել է «Դերձակ» ՍՊԸ-ին ընթացակարգի 11-րդ չափաբաժնի մասով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից, իսկ 17-րդ կետով՝ վրջինիս ծանուցել՝ մինչև 25.07.2017թ. ժամը 18:00-ն ներառյալ Պատվիրատուին ներկայացնել 11-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակի պատրաստի նմուշը՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման և մասնագիտական խմբի եզրակացությունն ստանալու նպատակով:

26.07.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովը որոշել է, որ «Դերձակ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնով ներկայացված նմուշը չի համապատասխանում N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին՝ մասնավորապես, բաճկոնի մեջքի կենտրոնական հատվածում պետք է բաց շագանակագույնով/բեժ ասեղնագործված լիներ «ԱԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» գրվածքն, այնինչ մասնակցի կողմից ներկայացված նմուշի վրա «ԱԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» գրվածքը ոչ թե ասեղնագործված է, այլ՝ տպված:

Նույն կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Դերձակ» ՍՊԸ-ն N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 8-րդ և 11-րդ չափաբաժիններով նմուշ չի ներկայացրել: Հանձնաժողովը որոշել է «Դերձակ» ՍՊԸ-ի 1-ին, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով ներկայացված հայտը մերժել:

Նշված արձանագրության 6-րդ կետով Հանձնաժողովը որոշել է N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 10-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Դերձակ» ՍՊԸ-ին:

«Դերձակ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական պայմաններով սահմանված է, որ ապրանքների նմուշները պետք է ներկայացվեն մատակարարումից առաջ՝ 2 օրինակից, իսկ ապրանքների մատակարարումը կատարվում է պայմանագիր կնքելուց հետո, սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից դրանք պահանջվել են անմիջապես մրցույթից հետո՝ Ընկերությանը տրամադրելով դրանց պատրաստման համար ոչ

իրատեսական ժամկետ, իսկ Հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած որոշ ապրանքատեսակների նմուշներն անբավարար գնահատելը վերջինս դիտարկում է որպես հանձնաժողովի կողմից կամայական և սուբյեկտիվ դրսևորում:

Որպես կայացված որոշման հիմնավորում՝ Պատվիրատուն 03.08.2017թ. թիվ 7/01/1/8540-17 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ մինչև 20.07.2017թ. «Դերձակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են նմուշներ 1-ին, 6-րդ և 10-րդ չափաբաժիններով: Մինչև 20.07.2017թ., ինչպես նաև մինչև 25.07.2017թ. 11-րդ չափաբաժնով «Դերձակ» ՍՊԸ-ն նմուշ չի ներկայացրել: Գնահատող հանձնաժողովի կողմից 26.07.2017թ. 3-րդ նիստով «Դերձակ» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով մերժվել է՝ համաձայն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնի, 10-րդ չափաբաժնով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 6-րդ չափաբաժնով «Դերձակ» ՍՊԸ-ի ներկայացված նմուշը ներկայացվել է փորձաքննության՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

Բողոքի քննության նպատակով 03.08.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ «Դերձակ» ՍՊԸ-ն մինչև ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետի ավարտը, այն է՝ 20.07.2017թ. ժամը 18:00-ն, Հանձնաժողովին է ներկայացրել 1-ին չափաբաժնով նախատեսված՝ ամենօրյա համազգեստի (լրակազմ) և 6-րդ չափաբաժնով նախատեսված՝ ձմեռային բաճկոնի նմուշները: Ընթացակարգի 11-րդ չափաբաժնով նախատեսված՝ կոչման տարբերանշանի նմուշ Ընկերության կողմից չի ներկայացվել, ուստի և տվյալ չափաբաժնով Ընկերության հայտը մերժվել է: 1-ին և 8-րդ չափաբաժինների մասով Ընկերության հայտը մերժվել է՝ նշված չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակների նմուշները ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ապրանքատեսակի պատրաստի նմուշ ներկայացնելու պահանջ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, թեև պնդեց, որ Ընթացակարգի հրավերով նման պահանջի սահմանումը պայմանավորված է եղել մասնակիցների՝ Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին լիարժեքորեն համապատասխանող համազգեստ մատակակարելու կարողությունը գնահատելու անհրաժեշտությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2017թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված հրավերի օրինակելի ձևի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող նույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղն զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղն զբաղեցրած Մասնակցին:

N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ապրանքատեսակի պատրաստի նմուշը գնահատող հանձնաժողովին՝ մասնագիտական գնահատման նպատակով, և երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը(...):

ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված

կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածով սահմանվել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները:

Օրենքի՝

- 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

- 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Խորհուրդն արձանագրում է, որ ընթացակարգի հրավերը պարունակում է երեք աշխատանքային օրվա ընթացքում ապրանքատեսակի պատրաստի նմուշը գնահատող հանձնաժողովին ներկայացնելու պահանջ, ինչը հակասում է հայտը գնահատելու նպատակով մասնակցին առաջադրվող գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման չափանիշների ներկայացման՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/2 ծածկագրով գնանշման հարցման հրավերով՝ մասնագիտական գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովին ապրանքատեսակի պատրաստի նմուշը ներկայացնելու պահանջ սահմանելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, 6-րդ մասով, 34-րդ հոդվածի 5-րդ մասով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2017թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված հրավերի օրինակելի ձևով սահմանված պահանջները, հետևաբար, Հանձնաժողովը «Դերձակ» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի գ) ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Դերձակ» ՍՊԸ-ի 31.07.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից «Դերձակ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին ընդունած որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ